

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

ՇՈՒՐ. ՅԵՃ մի յօդուած էր հրատարակել նահանգների և թեմերի վարչական սահմանները որոշելու անհրաժեշտութեան մասին: **Перк. Вѣстн.** եկեղեցական թերթը (№ 14) պատասխանում է այդ յօդուածին և պնդում է թէ «և Տէրութեան և եկեղեցու շահերը պահանջում են, որ նահանգների և թեմերի սահմանները համապատասխան լինին»: Բացի դորանից Պետերբուրգի Լոգեոսը ճեմարանի թերթը թեմերի թիւն աւելացնելը զուտ ֆինանսական խնդիր համարելով, ասում է թէ տէրութեան համար շատ ծանր կը լինի նոր թեմեր հաստատելու ծախքերը քաշել, առանց հոգալու աւելի էական կարիքների մասին: «մեղանում» — նկատում է եկեղեցական թերթը — ամենուրեք օրթոդոքս եկեղեցիների մեծ պահապանութիւն է նկատուում»:

Այդ խորհրդածութիւնների դէմ առարկում է ՇՈՒՐ. ՅԵՃ. լրագիրը, որի ղեկավարութիւններն արժանի են ուշադրութեան: Վերջին կարծիքը Պետերբուրգի լրագիրն անհիմն համարելով, իբրեւ հաստատութիւն իւր խօսքին յառաջ է բերում այն հանգամանքը, որ Ռուսաստանում մօտ 10,000 եկեղեցի քահանայ չունին: Սերբերում մի եկեղեցին միսից հարիւրաւոր վերտեր հեռու է գտնուում, բայց և այնպէս, — ինչպէս երևում է ուսաց սինոդի օրեր — պրոկուրորի տեղեկագրից 1896 — 1897 թ. համար — շատ եկեղեցիներ փակուած են: Իրկուտսկի թեմում 156 ծխ. եկեղեցի քահանայ ունի, 70-ը՝ ոչ, Զարայկալեան թեմում 187 եկ. քահանայ ունի, 90-ը չունի. Արխանգելսկի ընդարձակ թեմում 276 եկեղեցի քահանայ չունի և միայն 285 ունի. Օլոնեցկի թեմում 216 եկ. քահանայ ունի, 249 չունի և ընդ:

«Նախ քան նոր եկեղեցիներ շինելու անհրաժեշտութիւնը ցոյց տալիս — ասում է ՇՈՒՐ. ՅԵՃ. — աւելորդ չէր լինի, եթէ **Перк. Вѣстн.** հարկեր ցոյց տար, որ ժողովրդի կոպէկներով շինուած, ժողովրդի տուած հոգերով ու երեմն նոյն իսկ դրամագլխով ապահովուած եկեղեցիները չփակուէին, առանց պաշտօնեաների չմնային՝ դրացի եկեղեցիների պաշտօնէից նիւթական շահերի համար, հոգեւոր կոնսիստորիաների որոշմամբ»:

Թէ՛ սրբան մեծ է փակուած եկեղեցիների և վերացրած ծխերի թիւը Ռուսաստանի արեւմտեան նահանգներում, երևում է սինոդի օրեր —

պրոկուրորի վերոյիշեալ տեղեկագրից, այդ կողմի եօթը թեմերում 1896—1897 թ. եղել է 3,355 ծախ եկեղեցով ու քահանայով, 2,154 ծախ առանց քահանայի: Այսպիսի դէպքում եկեղեցին փակ է մնում, իսկ ժողովուրդը համարուում մի ուրիշ՝ քահանայ ունեցող եկեղեցու, ծախ:

Ժողովրդի կանոնաւոր հոլուութեան համար ՇՈՒՐ. ՅԵՃ. հարկաւոր է համարում դռնէ 20 նոր թեմ հաստատել. իւրաքանչիւր թեմի կառավարութեան համար հարկաւոր է տարեկան 35—45 հոգար ուրբի: Ուրեմն ընդամէնը քսան թեմի համար ոչ աւելի քան 750,000 ռ.: Այդ դուստրը կարելի էր ամենեւին տէրութիւնից չափանշել, այլ տար հոգեւոր վարչութիւնը, որի եկամուտը այս 1900 թ. համարում է 23,559,685 ռ., իսկ շուտով կարող է մինչև 30 միլիոնի հասնել: «Քանի՛ տասնեակ միլիոններ» — քաջագանջում է Պետերբուրգի լրագիրը, — ծախուած է 1891 թուից սկսած հոգեւոր վարչութեան դպրոցների վրայ, որոնց անագին մեծամասնութիւնը ոչ մի էական օգուտ չէ տուել ժողովրդին, և միայն նպաստել է դպրոցական վարչութիւն ստեղծելու քահանաներից, որոնք լաւ ուժիկ են ստանում պետական դանձարանից: Հատ դպրոցներ կան, որոնց կրօնուսոյց քահանաները իրենց վրայ դրուած պաշտօնը «անտանելի բեռն» են համարում (П. В.), կան և այնպիսի ուսումնարաններ, որ դոյութիւն ունին միայն հհ վերահսկիչների և հոգեւոր կոնսիստորիաների տեղեկագրերի մէջ:

ՇՈՒՐ. ՅԵՃ. բողոքում է քահանաների տէրութեան կողմից նշանակուելու դէմ և ժամանակին է համարում ժողովրդին վերադարձնելու առաքելոց ժամանակներից իրեն պատկանող իրաւունքը՝ իւր համար եկեղեցու սպասարկներ և սրբապնագործ պաշտօնեաներ ընտրել: Միայն հօտի աններելի անհոգութիւնը, իւր պարտականութիւնը չճանաչելը և սրբադան կանոնները չիմանալն է հնարաւոր դարձնում այն երեւոյթը, որ տէրաէքներին կանայք իրենց աջկանց համար փետացու են ընտրում և ամբողջ ծախը նոցա օժիտ տալիս: Լրագիրը հակառակ է նաև առաջնորդներին և քահանաներին տէրութեան դանձարանից ուժիկ տալուն, առարկելով որ ուժիկ ստանալով հանգերձ նոցա ժողովրդից տուրք են առնում բոլոր ծխակատարութեանց համար, բացի գորանից, տէրութեան առատ ուժիկ տալը (օր. Խոյմի թեմում քահանան ստանում է մինչև 1,200 ռ. տարեկան և լաւ վարելահող) օրթոդոքս եկեղեցու վիճակը չէ էլ բարւոքում: Նոյն իսկ սինոդի օրեր պրոկուրորի տեղեկագիրը վկայում է, որ Խոյմի թեմում 83,000 հոգի օրթոդոքս եկեղեցուց հեռացածներ կան, 26,177 հոգի չմկրտուած, 9,699 ապօրինի կենակցութիւն:

«Հաստատանակ միլիոններ» — առում է ՇՈՅ. ՅԵՃ., — ծախսել է տէրութիւնը հոգեւոր վարչութեան վրայ վերջին քսան տարւածքն ընթացքում, բայց որ և է օգուտ ստացել է գործանից եկեղեցին՝ այդ ցոյց կը ապացուցանայ:

ԿԵԹՈՒԿ ԵԿԵՂԵՑԻ.

Անցեալ թուականին կաթողիկոսիւնը Քրիստոնայում բաւական մեծ ձախորդութիւններէ հանդիպեց և այնպիսի ընդհարումներ ունեցաւ կառավարութեան հետ, որ թէ քաղաքական և թէ կրօնական անասկէտից նորա ազդեցութիւնը նուազեցնելու քիչ չնպատեցին: Հարկաւ այսպիսի հանգամանքներում աւելի պարզ է երևում, թէ որչափ ոյժ ունի նա երկրի մէջ, չնայած բոլոր տեսակ հակառակութիւններին և թէ մասնաւոր ինչպէս եղուիտական — անգղալեւնական ուղղութիւնը գնալով զօրանում է այստեղ և խեղդում գիտական ազատամտութեան, անկախութեան, ազգային ինքնուրոնութեան ամէն մի ձգտում: — Այդպէս կոչուած «ամերիկականութեան» դատապարտութիւնը մահացու հարուած տուեց նաև Քրիստոնայի մի բանի երիտասարդ կղերականների փղատամարական շարժումներին, որոնք իրենց ամերիկացի դաւանակիցներէ նման կամենում են եկեղեցին հաշտեցնել ժամանակակից աշխարհայեցողութեան հետ՝ կաթողիկոսիւնը ժամանակի ոգուն յարմարեցնել: Պատկազ առ թիւ կարդինալ Գլըքսմանն ուղղած թուղթը ինչպէս գործին ի մօտոյ տեղեակ անձինը հաւատացնում են՝ ամերիկացիներից գրեթէ աւելի Ֆրանսիացի կղերն ինկատի ունէր. այդտեղ դատապարտուում են գլխաւորապէս «Պաշտօններն» կարգի հիմնադիր Հեկկէրի զբբում արծարծուած դադափարները, որ Ֆրանսերէն թարգմանուելով խիստ մեծ ընդունելութիւն էր գտել և ոգեւորութիւն յառաջ բերել ընդարձակ շրջաններում: Երբ պատկի թուղթը հրատարակուեցաւ և շարժման բոլոր պարագլուխները հպատակեցան՝ այդ գրքի թարգմանիչ քահանան ևս ոտնպուած էր յետ առնել գրափաճառների մօտից իւր թարգմանութիւնը, որ արդէն վիցերորդ հրատարակութեամբ էր լոյս տեսել:

Պակաս ծանր չէր այն հարուածը, որ կրեցին նոյն ազատամիտ ուղղութեան պատկանողները, երբ պապը դատապարտեց Մարի անտոնով մի կրօնաւորութիւն յայտնած յառաջադիմական մանկավարժական գաղափարները: Այդ կրօնաւորութիւնը — վարժուհիներ իւր մի գրուածքով համեմատում է կաթողիկական կարգերի տուած կրթութիւնը պետական և բողոքական հաստատութիւնների տուածի հետ և ապացուցանում է, որ առաջինները շատ յետ են մնացել: Մեր հո-

գեւոր կրթարանների մէջ ստացուած թերթերը, առում է նա, կորելու մինչև անգամ արժանի չեն: Մարդ կարող է կանգնած տեղը քնել, երբ կարդում է այդ անհամ խրատները, այդ անդոյն՝ շարարաջրով աւելի ջրեացրած, ջերմեւանդութեան դասերը . . . Այդպիսի յնարաւանութիւններով ոչ խելք կրթել կարելի է, ոչ սիրտ . . . Բաւական չէ սանիկներին խօսքի տակին ու գլխին աղօթքների և խոստովանութեան կարգաւորութիւնը յիշեցնել: հարկաւոր է նոցա հոգու խորքը շարժել, կենդանութեան ու մտածողութեան դրդել: Նա մի սրտաղին յորդոր է ուղղում կաթողիկոսական վարժարաններէ վարչութիւններին՝ իւրացնել վերջապէս ժամանակակից կրթութեան եղանակները և բողոքական վարժարաններից օրինակ առնել: — Քրիստոնայի եկեղեցականութիւնը սիրով ընդունեց նորա առաջարկները և 3 արքեպիսկոպոսներ, 4 եպիսկոպոսներ, ակադեմիալի 4 անդամներ մի կոչ ստորագրեցին, որով հրաւիրում էին դրամ գրուել մի օրինակելի դպրանոց բանալու կաթողիկոսական վարժուհիների համար: Սակայն պապը կոնդակը այդ ձեռնարկութիւնն անտեղի և Մարի կոյսի դրուածքը խտելի հրատարակեց՝ մեծ արժանիքներ ընծայելով վանական կարգերի կրթական դործին մատուցած ծառայութեան: ձեռնարկութեան ջատագովներն անմիջապէս տեղի տուին և հպատակեցան բարձրագոյն հեղինակութեան առաջ:

Մի երբորդ հարուած ևս Լեոն ԺԳ ի Քրիստոնայ եպիսկոպոսներին և հոգեւորականութեան ուղղած շրջաբերականը կարելի է համարել, որով յորդորում է քահանաներին եպիսկոպոսներին հնազանդել և եռանդով աստուածաբանական ուսմանց հետեւել, մասնաւոր թովմա Եկուլինացու դաւանաբանական գրութիւնների ուսումնասիրութեան՝ ընդունելով որ եկեղեցւոյ վտարապետութեանց դէմ յայտնած կոտորածները օտար աշխարհի ծնունդ են, բողոքական աղբիւրքից: Այս յորդորների իսկական պատճառն է Ֆրանսիական կղերի մէջ օր աւուր աճող և արդէն վտանգաւոր կերպարանք ստացած դժգոհութիւնը, որ ոչ այնչափ դադափարական ճնշումից, որչափ հատարակ կղերականների անտեսական ուղղման վիճակից է յառաջ գալիս: Քր. յեղափոխութիւնից առաջ այս երկրում 36000 քահանաներ կային, որոնք հաստատ ծուխ ունէին, հոգեւոր և աշխարհական անկախ դատարանների էին ենթարկուում: 1801 թ. ին կնքած դաշնագրութիւնից յետոյ մնացել են միայն 3425 անկախ ծուխեր, մինչ 34000 քահանաներ ոչ մի աւակաւ իրաւունք չունին և ենթակալ են եպիսկոպոսի կամայականութեան: Այդպիսի մի քահանայ ստանում է տարին 900 Քրանի առճիւղ, 60 տարեկան

ժամանակ միայն 1000 Ք. և 70 տարեկան 1300 Քրանի: Քանի որ նորա վիճակը եպիսկոպոսի հանդիսը է կախում և՛ գիտական պատրաստութիւնը և ընդունակութիւնը բնականաբար երկրորդական տեղ են զուգում, ամէնքն աշխատում են հատկի կողմնակի աղբիւրներ ձեռք բերել, հաճոյանալ աղբիւրի աշխարհական անձանց, որով խեղճ և անպատուարեւր վիճակի մէջ են դրուում: Նոցա վիճակը վերջին քսան տարիներում աւելի ևս վատթարացել է վանական կարգերի չափազանց աճման շնորհիւ: Եկեղեցւոյ գլխաւոր եկամուտները սոցա ձեռքին են, իբրեւ քարոզչի ուսուցչի, խոստովանահայր ամէն տեղ նոցան է նախապատուութիւնը: Ուստի մինչ ծխական քահանաներն աղքատանում են, նոցա հարստութիւնը գնալով հոկայական չափերի է հասնում: 1881 թ.-ին Փրանսիոյ բոլոր վանքերի անշարժ կալուածների գինը 8 միլիոն էր հաշուում, այժմ հաշուում է 2 միլիարդ, իսկ ամբողջ կարողութիւնը 10 միլիարդ: 1789 թ.-ին Փրանսիայում 60 հազար կրօնաւորներ կային, այժմ կան 160 հազար, 1871 թ.-ին կղերական վարժարաններում սովորողների թիւը 35 հազար էր, այժմ 65 հազար, Թէ այս կրօնաւորական կարգերի մէջ ինչպիսի հրէշաւոր բաներ են կատարուում երբեմն՝ երեսեց վերջերս աստուծոյն խոստաների (յանուն վերափոխման ս. Աստուածածնի այգալէս կոչուող մի կրօն. կարգի) դէմ բաց արած դատից, որով զբաղուում էր ամբողջ եւրոպական մամուլը:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ԳԵՐՄԱՆԻԱ.

Հատ անգամ առիթ ենք ունեցել բողոքելու այն անհասկացողութեան, այն թիւր և տարօրինակ դադափարների գէմ, որ երևան են հանում մեր մէջ կրթուած մարդիկ աստուածաբանական գիտութիւնների և կրօնական խնդիրների նկատմամբ: Բայց հարկ չկայ իսկապէս այսպիսի հանգամանքներում վրդովուելու. նոքա միայն չեն, որ այգալէս են մտածում. լուսաւոր եւրոպայում ևս տեղի են ունենում յաճախ երեւոյթներ, որոնք սպաւորացանում են, թէ ամենանշանաւոր գիտնականներն անգամ կարող են կատարելապէս տգէտ լինել իրենց մասնագիտութիւնից դուրս եղող խնդիրներում և, ամօթ չհամարելով տգիտութիւնը մանաւանդ կրօնական—աստուածաբանական խնդիրներում՝ դասել նոցա մասին, իբրեւ թէ այդտեղ ևս գիտնական հեղինակութիւն լինէին: Այգալէսի երեւոյթներից մէկը, որ առանձին ուշադրութեան հրաւիրեց իւր վերայ՝ մեծանուն դարվինական կենդանաբան պրոֆ. Հեկկէլը անցեալ տարի հրատարակած մի գիրքն էր, որ

կրում է «Աշխարհիս առեղծուածները. հանրամատչելի ուսումնասիրութիւններ մոնիստիքական փիլիսոփայութեան մասին» անունը: Ընդունելով մի անգամ, որ աշխարհում առեղծուած չկայ, դերբնական բան չկայ՝ ամէն ինչ կարելի է և պէտք է միմիայն մեքենական օրէնքներով բացատրել՝ Հեկկէլը արհամարհում է և ծաղրում բոլոր հոկաւակ մտածողներին, թէպէտ դոցա թուում են Ալբրտով, Աւստրա, Դրեյբուս—Ռէյմոն և այլ նման բնագէտներ և փիլիսոփաներ, որոնց բոլորին աստուածաբանների ետևից դնացողներ է համարում: Ի միջի այլոց նա յառաջ է բերում մի դրուս «Գիտութիւն և քրիստոնէութիւն» վերնագրով, որ Christliche Welt թերթի մէջ խիստ սուր և կծու քննադատութեան է ենթարկել եկեղեցական պատմութեան հմուտ ուսուցչապետ Լոօֆս և փայլուն կերպով ցոյց տուել նորա կատարեալ տղիտութիւնը: Նորա կարծիքների անհեթեթութիւնը, նորա գործածած աղբիւրների շինծու և ամենայն արժանահաւատութիւնից դուրի լինելը, Հեկկէլը հաւատարմութեամբ է իւր բնութեցողներին, որ մեր չորս աւետարանները՝ լի ենելով երկրորդ դարում յառաջ եկած հակասութիւններով լի կեղծ գրութիւններ, բնորոշել են նման գրութիւնների մի մեծ խմբի միջից, աշխարհապաշտեամբ, Նիկիոյ ժողովում, իսկ այդ ժողովը նորա իմացածով տեղի է ունեցել 327 թ. ին, մինչդեռ ամէն դպրոցական տղայ գիտէ, որ 325 թ.-ին էր: Իբրեւ այս հրաշալի գիւտի աղբիւր նա ներկայացնում է «Պապոսի ժողովոց գիրքը» և բանից դուրս է գալիս, որ նա օգուտ է քաղել միջնադարեան ոչինչ պատմական արժէք չունեցող մի գրութիւնից և այդ գրութեմբ 1601 թ.-ին հրատարակող մի աստուածաբանի համարել է հեղինակ, կարծելով դուրս եկեղեցական նշանաւոր հայրերից մէկն է դա: Այգալէս և Քրիստոսի ծննդեան համար իբրեւ ստոյգ տեղեկութիւն յառաջ է բերել նա հրէական առասպելներից մէկը՝ առնելով ԺԳ. դարում մի անալիտան հրէայի հայհոյական գրութեմբից, որ գործ է ածել արդէն Վոլտէր իւր մաղծը կաթոլիկ եկեղեցու դէմ թափելու համար, և կոյր ատելութեամբ լեցուած համարել է այն աւելի հին քան նոյն իսկ աւետարանները: Տարօրինակ չէ՞ միթէ, որ գիտութեան անունով ամէն նախապաշարմունք ցրել կամեցող մարդիկ այսչափ նախապաշարուած են լինում քրիստոնէութեան նկատմամբ և պատրաստ աղայօրէն հաւատ ընծայելու անյայտանի առասպելների, միայն թէ իբրեւ դէնք ծառայէր այդ ճշմարիտ հաւատի դէմ:

Երկրասարդ փիլիսոփայ-աստուածաբան պրոֆ. Տրեյտշը նոյն թերթի մէջ մի ուրիշ յոգուածով

ապացուցանում է, որ Հեկիկէի փելիսոփայական տեսութիւններն ևս նոյնչափ խախտւեալ են և անհիմն, որչափ պատմական ծանօթութիւնները որ նա ուրիշների հաւատք ծաղրելով՝ իւր տեսութիւնները յենում է ոչ թէ գիտնական հետազոտութիւնների, այլ ինքնատեղծ նիւթապատկան հաւատալիքների վերայ և պահանջում իւր նման հաւատալ՝ ոչ պակաս մոլեռանդութեամբ, քան ուրիշ հաւատացողները։—Պրոֆ. Աօֆֆոսովպուած եղաւ մի փոքրիկ տեարակ ևս զրել Հեկիկէի դէմ, երբ վերջինս նորա քննադատութեան մի ամբարտաւան և անարդար պատասխան տուաւ, զրեցին նաև ուրիշները, և սակայն Հեկիկէի զիւրք հազարաւոր օրինակներով տարածուեցաւ մեծ օրաթերթերի մէջ ոգևորեալ մատենախօսութիւններ լոյս տեսան նորա մասին, իսկ ընդդիմախօսների ձայնը շատ քչերի տիւնջը հասաւ։ Ինչիցն է այդ։ Ինչիցն է, հարցնում է պրոֆ. Հառնակ մի հակիք և շատ լուրջ յօդուածով, որ «Աստուածաշունչի զրքերի մասին իրաւունք են համարում ամենամոտիւ բաներ տեսել, իրողութիւններ, որ ոչ մի ծանօթ մարդու համար կատիվ չեն և որոնք ամենափաւերական ղեկաւորութիւններով հաստատուած են՝ իբրև չեղած նկատել, օգի մէջ խօսել, բանի տեղ չդնելով գիտնական աշխատութիւնը, և այնուամենայնիւ պահպանել գիտնականի և պրոֆեսորի հեղինակութիւնը»։ Նորանից, պատասխանում է ապա ինքը մի բանի տող յետոյ, որ աստուածաբանական գիտութիւնը «գեռ ևս չի աղտոտւել այն կատիվից, թէ անախորժ բաներ քողարկում է, անկարելի բաներ պաշարանում»։ Իսկ այդ կատիվը փարատել, վտահոտութիւն գրաւել կարելի է ոչ թէ մանր մունր երկրորդական միջոցներով, այլ դառն երկարատե աշխատութեամբ։

Ժամանակակից հասարակութեան մէջ դարերի ընթացքում այն համոզմունքն է հաստատուել, թէ ինչ որ ընդդէմն ասում է գիտութիւն է և ճշմարտութիւն, ինչ որ աստուածաբանն է ասում՝ գիտաւորեալ բառախաղութիւն է և կեղծիք։ Եւրաւի այդ նախապաշարումը ցրելու համար գեռ շատ ջանքեր են պէտք՝ պէտք է մանաւանդ փողովըղականացնել, հանրամատչելի դարձնել աստուածաբանական գիտութեան մինչև այժմ ձեռք բերած արդիւնքները և ցոյց տալ նոցանով, որ քրիստոնէութիւնը ոչ մի ճշմարտութիւնից, ոչ մի քննադատութիւնից չի վախենում, որ նա զուտ գիտութեան և խոր պատմաբանական ուսումնասիրութեան առարկայ կարող է լինել և թօթափելով իւր վերայից պատահարս իրեն յաակացրած կատիվների տարերը՝ ներկայանալ իւր բոլոր վսեմութեամբն ու ճախութեամբը։— Իսկ թէ վերջին դարում այս աղղութեամբ ար-

դէն բաւական դործ կատարուել է, տոտուածաբանական գիտութեան սակաւաթիւ ներկայացուցիչներ դոնէ՝ իրենց մատուցած անփախելի մեծ ծառայութիւններով, ստիպել են շրջապատողներին ճանաչել, որ ջուր չեն ծեծում, այլ ասնուպէն նոյնչափ արդիւնաւէտ և հիմնարար աշխատանք են դործ դնում և նոյնպիսի յարգանաց ու վստահութեան արժանի են, ինչպէս միւս գիտութեանց ներկայացուցիչները՝ կարելի է մի փաստ համարել նոյն պրոֆ. Հառնակին մօտ փամանակներս արուած հրապարակական պատիւը։ Բերլինի գիտութեանց ճեմարանը, Գերմանիոյ ամենանշանաւոր գիտնական հաստատութիւնը, որ և առաջնակարգ տեղ է բռնում ուրիշ երկրներին նման հաստատութեանց շարքում՝ տօնեց իւր զոյգութեան երկերեւրամակար Հառնակին յանձնելով զրել իւր պատմութիւնը և նորան ընտրելով իւր կողմից իբրև պաշտօնական ճառախօս հանգիսի միջոցին՝ և այդ հանդիսին մասնակցողները, որոնց թուում պակաս չէին նաև ընտրէաներ՝ դանազան թերթերում տպած նկարագրութեանց մէջ առանձնապէս դոյաբանում են Հառնակի ճառը, իբրև մի փառաւոր գիտնական դործ։

— Առասուրդ աշխարհի տարօրինակութիւններից մէկն էլ այն է, որ անհաւատութեան հետ՝ մանաւանդ նորա զլխաւոր կենտրոններում, շատ ընդարձակ առարկէլ է դառնում սնտիապաշտութիւնը։ Ոստիկանական տեղեկութիւններից երևում է օր, որ Բերլինում հազարաւոր մարդիկ կան թուղթ բանալով, գուշակութիւններ անելով, արձիճ թափելով և այլ այսպիսի կախարդութիւններով ապրուստ շահող։ Աւ միայն հասարակ ամբողջ է որ գիմում է զոցաւ, այլ նաև հարուստ բարձր դասին պատկանող սեփական կառքերով ման եկող անհատներ։ Թէ յոճախորդները և թէ գուշակողները մեծ մասամբ կանանց դասից են հարկաւ։ Քիչ չեն այնպիսիները, որոնք այնչափ ընդարձակում են իրենց շահաւէտ գործը՝ մինչ սկսում են լրտալտիւն յայտարարութիւններով իրենց վարպետութիւնը հռչակել և միաժամանակն հրապուրել։ Չատիկ օրուայ թերթերից մէկում 70 այդպիսի յայտարարութիւններ կային, որոնցից ոմանք խոտաւում էին խաղատոմսի ճիշտ համարն ասել, ուրիշները տպագրան բոլոր մանրամասնութիւններով գուշակել, կամ հաւատացնում էին, որ բազմաթիւ աքսուական ու բարձրատիճան ծանօթներ ունին և ընդ Վան ճարպիկներ ևս, որոնք իբրև օտարազգի են ձևանում հունգարացի, սլոնիացի, անգլիացի, որպէս զի իրենց արհեստն աւելի հրապուրելի դարձնեն։ Իսկ մէկը յայտնում է, որ ընշանաւոր գուշակող և մարդկանց մարքինը կարգացող շէյխ Մուհամէդից՝ սովորել է միտախրա-

կան գիտութիւններէ բոլոր դպրանիւնները:—Մարդիկ երբեմն մի քաջ տառջ անելուց յետոյ երկու քաջ յետ են գնում:

ՆՈՐԻՆ ՎԵՀՎՓՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՏՓԹԻՍՈՒՄ

ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁՆ Ի Մ. ԱԹՈՒ:

Վեհափառ Հայրապետ առաջ շարժուայ խորհրդաւոր տօներին անձամբ մասնակցեց հանդէսներին: Բանքի Մայր եկեղեցում: Ժողովարդի երեկոյեան կատարեց դանարացէի կարգը: մասնակցութեամբ Գեր. Գեորգ Արքեպիսկոպոսի Ը. Տիրայր և Տ. Կորիւն վարդապետներ: Հինգշարժի երեկոյ ռանալուայի խորհուրդը՝ իւր շուրջն ունենալով Գեր. Գեորգ Արքեպս. ին. Հինգ վարդապետների և վեց քահանաների. եկեղեցին երկու գէպքում ևս այնքան լիքն էր, որ հազիւ կարելի չնչել: Նորին Ս. Օծաթիւնը նախագահեց նաև առաջ ուրբաթ երեկոյեան թաղման հանգիսին: որ կատարուեց դրսում՝ վանքի բակում: Սակայն այս բոլոր ժամանակ Նորին Սրբութիւնը տկար էր զգում իրեն որի հետ ապա հոգնածութիւնը և թեթև ինչուէնցիան միանալով այնչափ ուժասպառ արին, որ զատիկ ճրագալոյցին և տօնին չը կարողացաւ այլ ևս եկեղեցի իջնել և պատարագել ինչպէս և շնորհաւորութեան եկած հիւրերին ընդունել: որոց թուում էին Կովկասի Կառավարչապետի օգնական Գեո. Լէյտենանտ Փրէզէ. Ս. Էլզարթը, Հոգարարձու պ. Ստեփանիս, Պարսից հիւպատոսը, բողմաթիւ բարձր կարգի պաշտօնեաներ, պատուաւոր քաղաքացիք ևլն:

Հոգեւոր Տիրոջ խնամող չորս բժիշկներ պ. պ. Ա. Բարայեան, Բ. Սաւասարդեան, Տ. Կարապետեան և Կառլէլին, տեսնելով որ Նորին Սրբութեան հիւանդութիւնը ծանրանում է, որոշեցին փոխադրել քաղաքից դուրս Կրճաձիւսի այգիներում: Ետեւ. Կոյս Հովիւսի մէջ Թայիւրեանի ամբարանոցը որ ուրախութեամբ դրել էր Վեհափառ Հայրապետի տրամադրութեան ներքոյ: Այստեղ մաքուր օդի

և առողջարար ջրի բժշկաց անդուլ ջանքի և խնամքի շնորհիւ ութ օրուայ ընթացքում Հոգեւոր Տէրն առողջացաւ և բաւական կազդուրուեց: Ապա ապրիլի 20 ին իջնելով ամառանոցից՝ երկու օր մնաց Առաջնորդարանում և 22-ին ուղևորուեցաւ գէպի Մայր Աթոռ: Նորին Սրբութեան համար վարձուած էր առանձին գնացք Սալօն—վաղոնով: Մինչև կայարան ուղեկցում էին Տփիսի Գեր. Առաջնորդը, պատուաւոր քաղաքացիք, քահանաներ և բաղմաթիւ ժողովուրդ, իսկ այնտեղից մինչև Ալէքսանդրապոլ՝ Տ. Մխիթար վարդապետ, Տ. Կորիւն վարդապետ, Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեան, Առաջնորդ Սրբազանի կողմից Թէլէթի և Շաւնարաթի վանահայրները՝ Դիոնիսիոս և Յովհաննէս վարդապետներ, Արժ. Գիւտ. Ա. քահանայ ևլն. նոյնպէս և Բժշկապետ պ Աւետիք Բարայեան:

Սանահին Կայարանում Վեհ. Հայրապետին դիմաւորեց Ալէքսանդրապոլի փոխանորդ Տ. Մատթէոս վարդապետը, երկու պատուաւոր քաղաքացեոց հետ: որոնք եկած էին որպէս պատգամաւ օրնէր: Ալէքսանդրապոլի հասարակութեան կողմից: Ղարաբիլիսայի կայարանում ժողովուած էր զիւղի ամբողջ ժողովուրդը մարդ, կին, ձեր և երեխայ. ծանապարհին կանգնել էին տեղական ուսումնարանի աշակերտները իրենց ուսուցիչներով և քահանաների հետ: Այնտեղ ներկայացաւ Նորին Սրբութեան Ալէքսանդրապոլի գաւառապետը, որ և ուղեկցեց մինչև քաղաք:

Ալէքսանդրապոլ հասաւ գնացքը երեկոյեան 7 1/2 ժամին և Հոգեւոր Տէրը օրհնելով դիմաւորող խումբ բողմութեան՝ կառքով իջաւ առաջնորդարան: Եկեղեցեոյ դրան սպասում էին տեղւոյն հոգևորականները, բայց Վեհափառ Հայրապետը տկար լինելով չը կարողացաւ եկեղեցի իջնել: Երկրորդ առաւօտը ապրիլի 23-ին կայսերական տօն լինելով՝ Նորին Սրբութիւն պատարագին եկեղեցի իջաւ և մնաց մինչև մաղթանքի վերջը: Տ. Կորիւն վարդապետին հրամայած էր քարոզ խօսել պատարագի ժամանակ: Նորին Սրբութիւն երեք օր մնալով Ալէքսանդրապոլում ուղի ելաւ այնտեղից գէպի Ս. Էջմիածին ամսի 25 ին: